Մ. ՁԱՐԵՆՑ

# ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԲՐԻԳԱԴԸ



ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1933

891.99б
Զ.33
Гос. Публ. Библиотека

91.29 07. 2013
Ձ-33 ԿԿ

Դասից յեկավ
Սուրիկը,
դեմը վազեց
շնիկը,
գուրգուրեց նա
շնիկին,
ուրախ ասաց
մայրիկին.
— Ինձ շուտ վաղը
կարթնացնես,
ժամը ուղիղ
յոթն անց կես։
Պետք է գնանք
անպայման,
մեր կոլխոզը
հարևան,
վոր հավաքենք
սպիտակ,
քուլա քուլա
լավ բամբակ։

2.

Հաջորդ որը
վաղ ծեգին,
մեր պիոներ
Սուրիկին,
շուտ արթնացրեց
մայրիկը,
գնաց գործի
յեվ ինքը։
Վեր կացավ նա
ժպտերես,
նոր եր ժամը
յոթն անց կես։
Նախաճաշը
վերջրեց,
դեպի դպրոց
շտապեց։



12279

80
3
9660

—Հասավ դպրոց
շնչասպառ,
որը տաք եր
յեվ պայծառ։

3.

Գնում եյին
համարձակ,
շարքերը զիլ
յերգելով,
դեպի արտը
ընդարձակ,
վստահ, առողջ
քայլերով։
Գնում եյին
բուքսիրի,
պիոներները
քաջարի։

4.

Հասան արտը
կոլխոզի.
յերգն եր հնչում
բամբակի։
Կոլվարը մեր
գնաց մոտ,
ասաց նրանց
համառոտ.
—Բացվել է լավ
բամբակը,
վոր չմնա
ձյան տակը,
ձեր կոլխոզն ենք
յեկել մենք,
հարվածային
աշխատենք։
Նախագահը
կոլխոզի,

2011-07







առաջ յեկավ
վոր խոսի.
և նա կանգնեց
ցից քարին.
մի թուղթ ուներ
իր ձեռին.
— Սիրելի քաջ
պիոներներ,
դուք յեկել եք
կամքով ձեր,
վոր կոլխոզում
աշխատեք,

ճեղքվածքները
վերացնենք:
Մենք շատ ունենք
աշխատանք.
կուզենք ասեմ,
որինակ՝
— այ բամբակը
փռված լի,

պետք է շատ
հավաքվի:
Անցեք գործի
հաղթական,
մեր արտերում
կոլխոզի.

աշխատեցեք
ժրաջան,
վոր պլանը
չտուժի:
Սուրիկը,
Ժենյան,
Վարդանը,
Մարուսիան,
փոքրիկ Նիկոն,

խելոք Մարգոն,
Թոլիկ Մոսին
հավաքվեցին
բրիգադի,
մտան արտը
բամբակի:

Արտն եր թնդում
յերգերից,
ծիծաղներից,
կանչերից:



Սուրիկի քաջ
բրիգադան
գրոհում էր
հաղթական։
Թարղանները
մեծ ու լայն,
լցնում էին
բամբակով։
Աշխատանքը
յեռում էր
ու բամբակը




Ժպտում էր։
Ցերգն էր բռնել
արտով մի,
փչում էր լավ
զով քամի։
Ուզում էյին
բոլորը,
տարած լինեն
սոց—մրցում։
Ամեն մեկը
բրիգադից
գոռում էր զիլ՝
յեռանդից.
-Հե՛յ տղերք ջան
դե՛ առաջ,
հասանք էլի,
ի՞նչ մնաց։
Մի քիչ էլ հա՛
ուժ տվեք,
դե ձեզ տեսնեմ
մեր տղեք.
հավաքեցեք
լավ մաքուր,
հեչ չթողնեք,
մի փշուր։



• Լավ նայեցեք
վորակին,
վնաս չտաք
կոլխոզին։
Իսկ բրիգադիր
Սուրիկը,
բռնել եր մեծ
բարդանը,
բամբակն եր հա
մեջը լցնում
չարաճճի
Վարդանը։







Բարդանները
շարան-շարան,
Տանում եյին
ավտոյի մոտ.
ավտոները
տու-տու-տու,
սլանում եյին
կայարան։

5.

Աշխատանքը



պրծնելուն պես,
Նախագահը
խոսեց եսպես.
Ապրեք փոքրիկ
պիոներներ,
սոցիալիզմի
ծաղիկներ։
Դուք ձեր պստիկ
ուժերով
ու ձեր փոքրիկ
ձեռքերով,
աշխատեցիք
միասին,
ոգուտ տվիք
կոլխոզին։
Հարվածային
բրիգադը
Սուրենինն եր
առաջին,
նրանք իրենց
ուժերը,
աշխատանքում
լարեցին։
Այդ բրիգադի
անունը,
վորպես հերոս
պիոներներ,
մենք անպայման
կ՛գրենք,
պիոներական
թերթերում։

Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ - ССРА
им. А. Мясникяна
<< Ազգային գրադարան
NL0402435

12279

ԳԻՆԸ՝ 65 ԿՈՊ.



М. ДЖАРЕНЦ

УДАРНИК БРИГАДА

ГИЗ. ССРА. Эривань

Կ. Բ. ՄԵՍՐՈՊՅԱՆԻ
33 թ.

ատ. 1930, Տիրաժ 3000,
մ. 8270 (բ) Հրատ. 3106
Պետհրատի վիմագրատուն